ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2022թ. **N _____- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.651-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի ««Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու, կանոնադրության փոփոխությունը հաստատելու և «Լևոն Հովհաննիսյանի անվան սրտաբանության ԳՀԻ» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» հ.651-Ա որոշման /այսուհետ՝ որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին, 3-րդ և 4-րդ կետերում ««Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության» բառերը և դրա բոլոր հոլովաձևերը փոխարինել ««Երևան» գիտաբժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության» բառերով և դրա բոլոր հոլովաձևերով,

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Կազմված է 05.10.2022 թ. և բաղկացած է 2 թերթից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Երևան քաղաքի ավագանու

___ . _____ 2022թ.

թիվ _____-Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ՝

_____ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 19.03.2004 թ. գրանցման համար՝ 222.120.00271
հարկ վճարողի հաշվառման համար՝ 01002597
21.07.2010թ. գրանցված
կանոնադրության
թիվ _____.____ փոփոխությունը
գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
“_____”_____ 2022 թ.

Աշխատակից՝

_____ _____

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
փակ բաժնետիրական ընկերության
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(փոփոխություն)

«ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Կանոնադրության տիտղոսաթերթի վրա «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ բառերը փոխարինել «ԵՐԵՎԱՆ» ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ բառով:

2. Կանոնադրության 1.1-րդ կետում ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում ընկերություն)» բառերը փոխարինել ««ԵՐԵՎԱՆ» ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին անվանումը՝ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերություն, հետագայում ընկերություն)» բառերով:

3. Կանոնադրության 1.2-րդ կետում «Ընկերությունը ստեղծվել է» բառերը փոխարինել ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է» բառերով:

4. Կանոնադրության 1.7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.7. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ԵՐԵՎԱՆ» ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետրական ընկերություն
կրճատ՝	«ԵՐԵՎԱՆ» ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
ռուսերեն լրիվ՝	Закрытое Акционерное Общество НАУЧНО-МЕДИЦИНСКИЙ ЦЕНТР "ЕРЕВАН"
կրճատ՝	ЗАО НАУЧНО-МЕДИЦИНСКИЙ ЦЕНТР "ЕРЕВАН"
անգլերեն լրիվ՝	“YEREVAN” SCIENTIFIC AND MEDICAL CENTER Closed joint-stock company
կրճատ՝	“YEREVAN” SCIENTIFIC AND MEDICAL CENTER Closed J-S Company»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ փակ բաժնետիրական ընկերության 21.07.2010թ. գրանցված կանոնադրության (փոփոխությունները գրանցվել են 04.07.2012թ. և 08.02.2013թ.) բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.651-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի հ.651-Ա որոշման՝ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միանալով «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը, իսկ «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանվել է «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության:

Հաշվի առնելով, որ «Լևոն Հովհաննիսյանի անվան Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը հանդիսանում է ոչ միայն մասնագիտական հիվանդանոց, այլ նաև գիտահետազոտական կենտրոն, որտեղ կատարվում են գիտական աշխատանքներ և համակարգվում ու ֆինանսավորվում են գիտական կոմիտեի կողմից, նպատակահարմար է գտնվել «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել «Երևան» գիտաբժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերություն՝ գիտահետազոտական կենտրոնի գործառույթները պահպանելու և զարգացնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.651-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի հ.651-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի Հ.651-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 18-ի հ.651-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ